Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից 2024 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի փաստաթղթաշրջանառության բաժնում իրականացվել է ընդամենը 36644 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 12322 մտից, 8454 ելից, 15868 ներքին:

2024 թվականի ընթացքում ստացվել է 884 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 721 քաղաքացի: 686 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 35-ինը՝ մերժվել է:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 13 քաղաքացի, բոլոր 13 դիմումներին պատասխանվել է:

գ/ Առողջապահական բնույթի 19 դիմում է ստացվել, ստացված 19 դիմումներն էլ բավարարվել են:

դ/ Աշխատանքի հարցերով դիմել է 57 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է 20 քաղաքացի, 20-ին տրվել է դրական պատասխան:

զ/ Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 6 քաղաքացի և ստացել են դրական պատասխան:

է/ Հողաշինության հարցերով դիմումներ չեն ներկայացվել:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 16 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Ստացվել է այլ բնույթի 227 դիմում: